ԳԼՈՒԽ ԺԶ.

'Ի տանուտերաց Հայոց և Եպիսկոպոս փոխանորդէ Հայրապետութեան Հայոց ընտրեցեալ և ընդունեցեալ և հաստատեալ լինի Օրէնս կարգադրութեան հայոց զոր ինչ 'ի վեր և որ 'ի վայր ասելոց եմ, որ սովաւ լինի ընդունեցեալ ըստ կամաց և ըստ հաճոյից բոլոր ազգէն հայոց, սովաւ գոցի բոլոր հայք մի հօտ և մի կամս և Օրէնս սոցայ 'ի վերայ իւրեանց հովիւ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Զոր ինչ հատոր Օրինաց որում ժամանակի ընտրողութեան եթէ գացի հակառակ ոք ընդդէմ կամաց ընկերի իւրոյ վիճել ճառել իրաւացուցանել, արդարացուցանել, այլ հարկ լիցի 'ի վերայ հակառակողին մինչև երիս անգամ ժողովման Օրն ազատապէս ընդդիմանալ և խօսել պատճառն մատաց իւրոց և 'ի չորրորդ անգամ ժողովումն հանիցեն թիւ տանուտերաց կողմն այո և կողմն ոչ, որում կողմ որ բազմասցի թիւ կամաց մինչև միայնակ միով բերանաւ յաւելի քանթէ միւսն, հաստատեսցեն կամս յաւելորդ արանց, և պակասագոյնքն անխտրանօք և անանխանձաբար հաճեսցեն, և միաբան ընդունեսցեն արդարութիւն և հաստատեսցեն նոյն 'ի յո-